

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՅՈՒՄ

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՅՈՒՆԸ

Ոչ մի սպա, ոչ մի սերժանտ շարքային զինվորին անտեղյակ չի թողնի այն մասին, թե ինչի համար են հրացանը, սվինը, գնդացիքը կամ նռնակը: Զինվորներից յուրաքանչյուրին ամենայն մանրամասնությամբ սովորեցնում են օգտվել հակազգացից, ցույց են տալիս, թե ինչպես պետք է ծալել մախաղը (ուսապարկը): Սակայն նրանք, չգիտես ինչու, ինքնին հասկանալի են համարում, թե իբր յուրաքանչյուր զինծառայող գիտե, թե ինչի համար է կարգապահությունը:

Իրականում քեզին են անհրաժեշտ խորությունը հասկանում կարգապահության նշանակությունն ու կարևորությունը: Գրեթե կես դար անկարգապահությունը գիտակցորեն քարոզվում էր որպես կյանքի օրենք: Այն փրկասփանները, ովքեր իրենց գլխավոր կարգախոսն էին հռչակել «Վարվի՛ր այնպես, ինչպես քեզ է դուր գալիս» սկզբունքը, հարձակվում էին բոլոր ընդունված նորմերի, օրենքների ու կարգի՝ ամուսնության, ընտանիքի, եկեղեցու, պետության, կայսրության վրա: Նույնիսկ երաժշտության, գրականության, թատերական արվեստի բնագավառներում նախկինում ընդունված ձևերը մերժվում էին, ծնվում էին նոր դպրոցներ (եթե դրանք դպրոցներ կարելի է անվանել), որոնք, թվում է թե ոչ մի որոշակի կանոն չէին ընդունում: Վերջին հիսուն տարիների փրկասփայլությունը կարելի է անվանել անհատապաշտության փրկասփայլություն: Այն չափից ավելի է շեշտում անհատի իրավունքներն ու արտոնությունները, միաժամանակ գրեթե լիովին մոռացության տալով հասարա-

կուլթյան իրավունքներն ու արտոնությունները:¹ Զառամյալ մարշալ Պետենը ռադիոյով ունեցած իր պատմական ելույթում Ֆրանսիայի անկման մեղքն այդ փիլիսոփայության վրա դրեց: Եվ նա, հավանորեն, իրավացի էր:

Միանգամայն անհրաժեշտ է յուրաքանչյուր գինվորի գիտակցությանը հասցնել այն, թե ինչի համար է պետք կարգապահությունը: «Գիտություն պատերազմի մասին» գրքում Հենդերսոնը գրում է. «Պատերազմը լուկ կույր կոխի չէ՝ ղեկավարությունից և փոխներգործությունից զուրկ երկու ամբոխների միջև: Դա երկու լավ կազմակերպված զանգվածների բախում է, որոնցից յուրաքանչյուրի մասերը խելամտորեն համագործակցում են, ենթարկվում մեկ միասնական կամքի և իրենց առջև որոշակի նպատակ են տեսնում»:

Այլ կերպ ասած, կարգապահությունն անհրաժեշտ է անհատների զանգվածը այնպիսի կազմակերպված կոլեկտիվ դարձնելու համար, որը գործում է որպես մեկ ամբողջություն, հանուն միասնական նպատակի և միասնական կամքով կապված: Պատմությունն անվիճելիորեն ապացուցում է, որ այդպիսի համակարգն իրեն արդարացնում է ինչպես խաղաղ ժամանակ, այնպես էլ պատերազմական պայմաններում: Այն ավելի մեծ հավանականությամբ է հանգեցնում որոշակի նպատակների իրագործման, քան որևէ այլ համակարգ:

Այլ ոլորտներում ևս դժվար չէ գտնել այս կարծիքը հաստատող փաստեր: Այն ֆուտբոլային թիմը, որը կազմված է տասնմեկ փայլուն խաղացողներից, բայց որոնք, գործում են՝ յուրաքանչյուրը միայն հույսն իր վրա դնելով, չի կարող հաջողության հասնելու իրական հույսեր ունենալ, երբ հանդես է գալիս տասնմեկ քիչ փորձառություն ունեցող ֆուտբոլիստների դեմ, որոնք, սակայն, կոլեկտիվ խաղ են ցուցադրում: Պարանի երկու հավասար երկարություն կողմերից ձգելիս անխուսափելիորեն կհաղթի այն խումբը, որը համաձայնեցված է գործում: Թիավարելիս, առագաստանավային սպորտում մրցելիս, թենիսում, կրեկետ խաղալիս և այլն, հաղթանակը կախված է գործողությունների փոխհամաձայնեցվածությունից: Նույնն է նաև բիզնեսում. հաջողության հասնում է այն ֆիրման, որի աշխատակիցները խիստ կարգուկանոնի են ենթարկվում:

Սովորաբար, ոչ թե լուկ նշանակություն չի տրվում կարգապահությանը, այլև հաշվի չի առնվում անկարգապահության վտանգը: Այդ վտանգը գինվորները պետք է ըմբռնեն գինված ուժերի կազմ ներգրավվելուց անմիջապես հետո: Նրանք դեմ չեն լինի կարգապահությանը, եթե գիտակցեն նրա նշանակու-

¹ Այստեղ, անկասկած, հեղինակը նկատի ունի 20-րդ դարասկզբի եվրոպական և ամերիկյան փիլիսոփայությունը: Ուրիշ երկրներում փիլիսոփայության զարգացումն ընթացել է այլ ուղիներով: - Թարգմ. ծնթ.

թյունն ու կարևորությունը: Անկարգապահությունը առաջ կբերի զինվորների արհամարհանքը, երբ նրանք իմանան, թե ինչպիսի անկարգության ու քաոսի այն կարող է հանգեցնել: Եթե խոհարարներին թույլ տան սնունդ պատրաստել, երբ իրենք են ցանկանում, ապա գորքերը լրիվ պատկերացում կկազմեն այն մասին, թե ինչի է հանգեցնում անկարգապահությունը:

Տարբերում են կարգապահության երկու տեսակ. զանգվածների կարգապահություն և անհատի կարգապահություն: Զանգվածների կարգապահության վերաբերյալ Հենդերսոնն ասում է. «Վատ կարգապահություն ունեցող բանակում շատ ցածր մակարդակի վրա է նաև շարժունությունը: Հազար սվին ունեցող գումարտակը ժամանակին կուլի դաշտ դուրս բերելը հեշտ գործ չէ: Կուլի դաշտում հաջողության հասնելու գաղտնիքը վճռորոշ ուղղությամբ գերակշռող ուժեր կուտակելու կարողության մեջ է՝ լինեն դրանք բարոյական, նյութական, թե՛ և՛ մեկը, և՛ մյուսը»: Կարգապահ գորքերը հարձակման ժամանակ մեծ եռանդ են դրսևորում:

Ամերիկայում քաղաքացիական պատերազմը սարսափելի անկարգության ողբերգական օրինակ ցույց տվեց, այնպիսի անկարգության, որը գորքերի մոտ մանրակրկիտ նախապատրաստության և կոշտ կարգապահության բացակայության հետևանք էր: Պատմության մեջ կարելի է բավականին մեծաթիվ օրինակներ գտնել, թե ինչպես զինվորները, վե՛հ դրդապատճառներից մղված կռիվ գնալով, հանդես են բերել և՛ մեծ եռանդ, և՛ մեծ խիզախություն: Սակայն երկարատև ժամանակաշրջաններում վիճակն այնպիսին է եղել, որ հակառակորդ բանակները կազմված են եղել գլխավորապես ռազմական գործը վատ իմացող, թեև ոգեշնչված մարդկանցից, որոնք արշավանքի էին դուրս գալիս երբ իրենք էին ցանկանում, և ցրվում էին ըստ իրենց հայեցողության: Արդյունքները զարմանալիորեն տարօրինակ էին լինում: Ոչ մի հրամանատար հաստատ չգիտեր, թե կուլի դաշտում քանի զինվոր կունենա և նրանք երբ կհավաքվեն: Իսկ այն դեպքերում, երբ նրանք արդեն ներկա էին լինում, նա չգիտեր, թե նրանց խելքին երբ է փչելու դադարեցնել մարտը: Յուրաքանչյուր զինվոր ինքն իր հրամանատարն էր և հաշվի էր առնում միայն իր սեփական ցանկությունները: Բայց դեռևս չէր եղել որևէ այլ պատերազմ, որի ժամանակ այնքան անձնական հերոսության արարքներ գործած լինեին և, միաժամանակ, այնպիսի մեծ քանակությամբ շարդարացված զոհեր տրված լինեին, այնքան զուր ջանքեր գործադրված լինեին:

Շարային պատրաստությունը ավելի արդյունավետ և պակաս հոգնեցնող կլինի, եթե զինվորները հասկանան դրա իսկական նպատակը: Այդ նպատակը հետևյալն է. ա) հասնել գործողությունների փոխհամաձայնեցման, բ) հրամաններին ենթարկվելը սովորություն դարձնել: Շարային պատրաստու-

թշուհը հաճախ է քննադատություն թիրախ դառնում (հատկապես այն մարդկանց համար, ովքեր, ցանկալի է, որ ռազմական գործի վերաբերյալ ավելի շատ բան իմանային), որովհետև նրա իսկական նպատակը անհասկանալի է մնում: Ծաղրի են ենթարկում «հնացած արարողությունները», «գորանոցային հրապարակի պարապմունքները», դրանք խոչնդարող ումբակոծիչների և տանկերի դարաշրջանում «անհույս կերպով հնացած» են համարվում: Սակայն այդ աշխույժ քննադատությունը շրջանցում է շարային պարապմունքների բուն էությունը: Զինվորը կամ գունդը երբեք բնագործ են ենթարկվի, եթե ենթարկվելը սովորություն չի դարձել: Պատմական փորձը անվիճելիորեն ապացուցել է, որ շարային պատրաստությունը կոլեկտիվում ենթարկվելու սովորություն դաստիարակելու առավել արդյունավետ և նույնիսկ միակ եղանակն է:

«Դիտարկենք մի օրինակ, որը ցույց է տալիս, թե ճգնաժամային իրադրություն մեջ ինչեր կարող է անել կարգապահությունը: Պատերազմի սկզբում, Մոնսից նահանջելիս, անգլիական գվարդիական դիվիզիայի գումարտակներից մեկը պաշտպանում էր պաշտպանական գծի հանգուցային կետ համարվող մի կամուրջ: Այդ կամուրջը պահելուց շատ բան էր կախված: Վրա հասավ վճռական պահը: Գերմանացիներն այդ գումարտակի դեմ նետեցին մեկ դիվիզիան մյուսի հետևից և փաստորեն ոչնչացրին այն: Ոչ այնքան խոր խրամատում մնացին հազիվ 30 զինվորներ: Նրանց առջև, մի քանի մետրի վրա, կար մի խոր խրամատ, որը տանում էր դեպի թշնամու թիկունքը: Այդ մի բուռ մարդիկ անհավասար կռիվ էին մղում գերմանացի մեծաթիվ հրոսակների դեմ, որոնք համառորեն մղվում էին դեպի կամուրջը: Հանկարծ անգլիական թոմմին, դեռևս գրեթե մի դեռահաս, գոչում է. «Գվարդիականներ, առա՛ջ»: Կենդանի մնացած գվարդիականները նետվում են անխուսափելի թվացող մահին ընդառաջ: Մոտավորապես տասնհինգ մետր վազելով նրանք թռչում են այն խրամատը, որը տանում էր դեպի գերմանացիների պաշտպանության թևը, և թիկունքից ուժգին կրակ են բացում հարձակվող թշնամու վրա: Գերմանացիները տատանվում և կանգ են առնում: Ի վերջո, նահանջի հրաման է տրվում և հարձակվողների ալիքը սկսում է հետ գլորվել: Շուտով համալրում է ստացվում և կամրջի մոտ գրաված դիրքը հաջողվում է պահել: Երիտասարդ թոմմիի անունը հիշատակվում է հրամաններում և նրան ներկայացնում են պարգևատրման: Դիվիզիայի հրամանատար գեներալը հարցնում է. «Ո՞վ հրամայեց առաջ շարժվել դեպի այդ խրամատը»: Նրան պատասխանում են, որ դա տասնութամյա փողհարն էր: Զարմանքից քար կտրած գեներալը բացականչում է. «Հիանալի տղա է: Ինչպե՞ս դուք համարձակվեցիք այդպիսի հրաման տալ»: Զինվորը պատասխանեց. «Իրանք, սը՛ր, գվարդիականներ էին: Ես

գիտելի, որ նրանք կենթարկվելին»։ Այո՛, նա գիտեր, որ կարող է հույս դնել իր գործամասի մարտական ոգու վրա»։²

Սակայն գանգվածի կարգապահությունը դեռ բոլորը չէ։ Ժամանակակից պատերազմում բավական չէ, որպեսզի հազար հոգին գործեն որպես մեկ ամբողջություն։ Առավել ևս մեր ժամանակներում, քան երբևիցե, յուրաքանչյուր զինվոր պետք է ոչ միայն անառարկելիորեն ենթարկվելու ոգի ունենա, այլև պետք է ոգեշնչված լինի։ Նա պետք է գիտենա, որ ժամանակակից ճակատամարտի որոտի մեջ հարձակման ելքը նշանակալի շափով կախված է իր նախաձեռնությունից։ Զինվորների այդպիսի ուսուցումը հիանալի կերպով կհամապատասխաներ անգլիական բնավորությանը։ Որպես ազատ մարդկանց ռասա մենք ակնհայտ առավելություն ունենք գերմանացիների նկատմամբ։ Խիտ շարքերով հարձակվելու եղանակը ստեղծվել է ոչ թե գերմանացի ռազմական տեսաբանի քմահաճույքով, այլ դաժան անհրաժեշտության ճնշման հետևանքով, ճնշում, որը պայմանավորված է գերմանական բնավորությունը հատուկ ներքին թերություններով։

Գերմանական զինվորի հոգեբանական կերտվածքի լավագույն գծերն են բնագրային հնազանդությունը, ծայրահեղ աշխատասիրությունը և մանրուքների նկատմամբ բացառիկ ուշադրությունը։ Հիմարություն կլիներ թերագնահատել այդ խիստ արժեքավոր գծերը։ Սակայն դրանք չեզոքացվում են նրա թույլ կողմերով. նա ստրկական մտածելակերպի տեր է և հմուտ ղեկավարման կարիք ունի։

Արժանին մատուցելով Գերմանիայի ռազմական համակարգին, անհրաժեշտ է նաև ընդունել, որ գերմանացի զինվորները ականավոր ռազմական ղեկավարներ ունեին։ Ավելի քան կես դար գերմանացի սպային սովորեցնում էին կովի դաշտում ղեկավարել իր ենթականերին, և նման ուսուցումը գործնականում իրեն հոյակապ կերպով արդարացրեց։ Գերմանական բանակի իրական ուժը գրեթե բացառապես նրա ղեկավարությունն է։

Որպես զինվոր գերմանացին զիջում է այլ ռասաների պատկանող զինվորներին։ Ընդհանուր կարծիքն այն է, որ Ամերիկայում քաղաքացիական պատերազմի ընթացքում գերմանական զորամիավորումները ավելի վատ էին կռվում, քան իռլանդացիները։ Այդ փաստը հատուկ նշանակություն է ստանում, երբ նկատի ենք ունենում, որ իռլանդացիներին բնորոշ է անհատապաշտությունը (ինդիվիդուալիզմը), այն դեպքում, երբ գերմանացիների մոտ, այլ ռասաների համեմատությամբ, ուժեղ է հոտային բնագրը։ Իռլանդացիներին

² Գեներալ-մայոր Մ.Բ.Սթյուարտի դասախոսությունից, որ նա կարդացել է Միացյալ Նահանգներում՝ Ուեստ-Փոյնթի ռազմական դպրոցում։ - Հեղինակի ծնթ.։

հիանալի զինվորներ էին անվանում, մինչդեռ գերմանացիների վերաբերյալ այդ շոյող բնորոշումը երբեք չի օգտագործվել: Անգլիական այն զինվորների վրա, ովքեր այս պատերազմի ճակատամարտերում դեմ առ դեմ հանդիպել են գերմանացի զինվորներին, վերջիններիս ռազմական ունակությունները որևէ սպավորություն չեն գործել:

Նկարագրելով Թորբուկի վրա գերմանացիների կատարած հարձակումը, զինվորական թղթակիցներից մեկը հաղորդում է հետևյալը.

«Մի ավստրալիացի, նախկին առևտրական Սիդնեյից, պատմեց ինձ, թե ինչպես ինքն ու հինգ այլ զինվորներ, պահակախմբի կազմից, փախուստի մատնեցին քառասուն գերմանացիների, նրանցից մեկին էլ գերի վերցնելով:

- Մենք հաղորդագրություն ստացանք, - ասում էր նա, - որ փշալարերից այն կողմ մոտ քառասուն գերմանացիներ կան: Մենք գնացինք ընդամենը վեց հոգով, որպեսզի շատ չթուլացնենք մեր դիրքը:

Կրակի պաշտպանություն ներքո, որ մեր գլուխների վրայով անընդմեջ տեղում էին մեր մարտիկները, խուճբը, մերկացրած սվիններով, ներխուժեց գերմանացիների դիրքերը:

Թույլ շտաբով, որ նրանք խելքի գան, մենք սպանեցինք գերմանացիներից հինգին:

Մի քանի գերմանացիների ես հարվածներ հասցրի խզակոթով: Հետո ես մի քար վերցրի՝ և ողջ մնացածները ծունկ չոքեցին: Նրանցից մեկը արցունքն աչքերին աղաչում էր. «Մի՛ սպանեք ինձ», իսկ մյուսը գոչում էր. «Հանձնվո՛ւմ եմ, հանձնվո՛ւմ եմ»:

Հիմա ես կարծում եմ, որ երբ գործը ձեռնամարտի է հասնում, ապա գերմանացիները իտալացիներից լավը չեն»:

Շոտլանդական գնդի մի սերժանտ, որը մասնակցել է նախկին և այժմյան պատերազմների ձեռնամարտներին, ասաց. «Այժմ գերմանական զինվորները նման չեն իրենց հայրերին, որոնք կռվում էին 1914 – 1918 թվականներին: Այդ տղաները մերձավոր կռվի մարտիկներ են, ընդ որում կատաղի, մոլաբար զինվորներ»:

Ավստրալիացու այն միամիտ կարծիքը, թե վեց հոգին ի վիճակի է կռվել քառասուն գերմանացիների դեմ, հատուկ մեկնաբանություն է պահանջում:

Անգլիացու այն (բոլորովին էլ ոչ անպատկառ) համոզմունքը, թե ինքն առնվազն երեք օտարերկրացի արժե, ծագել է դեռևս Ազենկուրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, որտեղ նա չընդունեց իր աննպաստ վիճակը, թեև թշնամին թվային նշանակալից առավելություն ուներ: Նույնիսկ ժամանակակից պայմաններում մարտի էլքը որոշվում է ոչ այնքան զորքերի թվաքանակ-

կով և զինվածություններ, որքան զինվորների կամքով: Անգլիական զինվորի բարոյական գերազանցության աղբյուրն այն է, որ նա իր հոգեբանական կերտվածքով ի վիճակի չէ իրեն պարտված տեսնել:

Անհատի կարգապահությունը, ի տարբերություն խմբային կարգապահության, լավագույնս զարգանում է ուսուցման ընթացքում: Ամեն մի հնարավորություն պետք է օգտագործել զինվորին հնարավորություն տալու համար, որպեսզի նա նախաձեռնություն հանդես բերի: Այն հիմար հանդիմանությունը, թե. «Ռու այստեղ նրա համար չես, որ մտածես», որը հաճախակի կարելի է լսել ոչ այնքան կրթված սերժանտների շուրթերից, պետք է փոխարինել հետևյալով. «Ռո՛ւք այստեղ նրա համար եք, որպեսզի մտածեք»: Ե՛վ զորանոցային հրապարակում, և՛ դասասենյակում յուրաքանչյուր զինվորի պետք է ստիպել, որ մտածի ոչ միայն իր, այլ նաև զորամասի մյուս զինվորների համար»:

Եթե զինվորին արգելենք մտածել, նրա վրա ոչ մի պատասխանատվություն չդնենք, թույլ չտանք, որպեսզի շարժվի ու գործի այլ կերպ, քան միայն ըստ հրամանի, ապա շատ շուտով նա կկորցնի նախաձեռնություն հանդես բերելու ամեն մի ընդունակություն: Ժամանակակից պատերազմում, երբ ճակատամարտերը շատ ավելի մեծ են և լարվածությունն էլ ավելի բարձր, քան անցյալի պատերազմներից որևէ մեկի ժամանակ, միանգամայն անխուսափելի են այնպիսի իրադարձությունները, որոնցում առանձին զինվորներ ստիպված կարող են լինել գործել ինքնուրույն, ըստ իրենց հայեցողության: Անհրաժեշտ է առանձին զինվորի պատրաստման այնպիսի համակարգ մշակել, որը կօգնի նրան լիովին պատրաստ վիճակում դիմավորել ցանկացած վտանգ:

Երբեմն կարելի է լսել, թե ժամանակակից զինվորը, ավելի կրթված ու զարգացած լինելով, քան իր նախորդները, խիստ կարգապահության կարիք չի զգում: Սա չափազանց վտանգավոր մոլորություն է: Զարգացման ցածր մակարդակ ունեցող զինվորներից կազմված, խիստ բարձր կարգապահություն ունեցող բանակը կարող է գլխովին ջախջախել թեև համալսարանների շրջանավարտներից կազմված, բայց վատ կարգապահություն ունեցող բանակին: Անկախ անձնակազմի կրթական մակարդակից, ոչ մի բանակ չի կարող մարտունակ լինել, քանի դեռ ենթարկվելը զինվորների համար սովորական չի դարձել: Փորձը ցույց է տալիս, որ կովի դաշտում նույնիսկ կրթվածությունն այնքան կարևոր հատկություն չէ, որքան կարգապահությունը:

Այն պնդումը, թե իբր բնագրաբար ենթարկվելու սովորությունը սպանում է նախաձեռնողությունը և բթացնում միտքը, պարզապես ճիշտ չէ: Անգլիական ծովային սպաները դաստիարակվում են 13,5 տարեկանից սկսած և իրենց ողջ ծառայությունն անցկացնում են երկաթյա կարգապահության պայ-

մաններում, սակայն ճակատամարտում զարմանալի նախաձեռնողություն և սրաթափանց միտք են դրսևորում սարսափ ներշնչելով թշնամիներին և առաջ բերելով բարեկամների հիացմունքը:

Կարգապահությունը զորքերի բարոյական վիճակի հիմքն է: